

# ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀՆ ԱՐԻՒԻԱՑԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

ՍԵՐՀԱԿ ԱՄԻՐԵԱՆ

Ընդամէնը 10-12 տարի առաջ, Խորհրդային Հայաստանում (ԽԽՍՀ), ի սկզբանէ «Հակախորհրդային, դաշնակցական գործունէութեան համար» ժողովրդի թշնամի յայտարարուած Գարեգին Նժդեհի (Տէր-Յարութիւնեան, 1 Յունուարի 1886-21 Դեկտեմբերի 1955) անուանը կարող էին ծանօթ լինել լաւագոյն դէպքում մի քանի հազար մարդ, եթէ ոչ մի քանի հարիւր, իսկ նրան արժանին հաստոցողների եւ գնահատողների թիւը, թերեւս, տասնեակներով հաշուուէր՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ՝ 10 Հոկտեմբերի 1944ին, Սոֆիայում, Խորհրդային Միութեան (ԽԽՍՀ) գօրքերի Հակահետախուզութեան Գլխաւոր Վարչութեան՝ «Սմերչի»<sup>1</sup> կողմից ձերբակալուելուց, Մոսկուայի եւ Երեւանի բանտերում չորս տարի եւ երկու ամիս հարցաքննութեուց յետոյ, Նժդեհը՝ ԽԽՍՀ Անվտանգութեան Նախարարութեանն Առընթեր Յատուկ Խորհրդակցութեան որոշմամբ դատապարտուեց 25 տարուայ բանտարկութեան։ Ճակատագրի բերումով դատավճիռը կայացուեց Մեծ Եղեռնի տարեղարձի օրը՝ 24 Ապրիլի 1948ին։

Նժդեհի ձերբակալմանը, հարցաքննութիւններին եւ դատավարութեանը վերաբերուող փաստաթղթերը, ինչպէս նաև բանտում նրա զրած որոշ ձեռագիր նիւթեր, պահպանուած են ՀՀ Ազգային Անվտանգութեան Նախարարութեան Գերատեսչական Արխիւմ (ԱԱՆԱ) չորս հատոր գործերում (Փոնդ 12997, արխիւային համար 5231, այսուհետեւ՝ Նժդեհի Գործ)։ Առաջին երեք հատորներում Նժդեհի դէմ յարուցուած համար 11278 քրէական գործին առնչուող նիւթերն են, չորրորդ հատորում՝ Նժդեհի ձեռագիր եւ մեքենագիր, հայերէն ու ռուսերէն փաստաթղթերը, որոնք ամփոփուած են հինգ առանձին ծրարներում։ Մրարներն համարակալուած են, բայց նրանցում ամփոփուած թերթերը չունեն ընդհանուր համարակալում։ Ինչպէս այս, այնպէս էլ ՀՀ պետական միւս արխիւներում պահպանուող Նժդեհին վերաբերուող փաստաթղթերը մինչեւ Հայաստանի անկախացումը անմատչելի էին օգտագործման համար։ Արգելքի տակ էր նաև Նժդեհի վերաբերեալ այն սահմանափակ գրականութիւնը, որը պահւում էր Երեւանի մի քանի գրադարանների (Ազգային Գրադարան, Գիտութիւնների Ազգային Ակադեմիա-

յի Հիմնակազմ Գրադարան, Երեւանի Պետական Համալսարանի, Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Պատմութեան Խնստիտուտի, Մատենադարանի եւ Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի գրադարանները) փակ Փոնդերում:

Մասամբ այլ էր վիճակը Սփիւռքում: Նժդեհին ճանաչում էին շատերը: Նրան ճանաչողների մի կարեւոր մասը գնահատում էր նրա աւանդը, գրում նրա մասին: Նժդեհի գործերը՝ եւ նրա մասին աշխատութիւնները<sup>3</sup> հրատարակւում էին նրա կենդանութեան օրօք եւ յետմահու: Ոմանք նոյնիսկ նրան աստուածացնում էին եւ պաշտում: Բայց, Նժդեհն ունէր նաև Հակառակորդներ: Կային նրան պարսաւողներ ու դատապարտողներ<sup>4</sup>:

Վերջին աւելի քան տասը տարիների ընթացքում Նժդեհի մասին քիչ չի գրուել Հայաստանում<sup>5</sup>: Երեւանում հրատարակուել կամ վերահրատարակուել են նրա աշխատութիւնները<sup>6</sup>: Նա այսօր էլ շարունակում է մնալ Հետազոտողների Հետաքրքրութիւնների դաշտում, եւ դեռ երկար կը մնայ, քանզի նա այսօր նոյնքան այժմէական է, որքան երէկ: Նժդեհին իր ամբողջութեան մէջ՝ կեանքով, պաքարուվ, խորքով, ուազմաքառական, ազգային-գաղափարաբանական, բարոյական որակներով ամբողջութեամբ ճանաչելու համար մասնագէտները դեռ ճանապարհ ունեն անցնելու: Իսկ այդ ճանապարհը անցնում է Նժդեհի ժառանգութիւնը ըստ ամենայնի ուսումնասիրելու եւ իմաստաւորելու միջով եւ մանաւանդ՝ այլ ժառանգութեան այն մասի, որը մեզ է ներկայանում տագնապայի ժամանակների երախից փրկուած նժդեհեան փաստաթղթերի տեսքով: Դրանց մի զգալի մասը յայտնի է հանրութեանը. հրատարակուած է եւ մտած գիտական շրջանառութեան մէջ՝ Խօսքը ամէնից առաջ վերաբերում է Հայաստանի Հանրապետութեան Պատմութեան, (ՀՀ ՊԱ) մասամբ նաև՝ Նորագոյն Պատմութեան (ՀՀ ՆՊԱ) եւ Հայարակական-Քաղաքական Պատմութեան (ՀՀ ՀՔՊԱ) արխիւներում, ինչպէս նաև ԱԱՆԱ գերատեսչական ու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ) Բոստոնում գտնուող կուսակցական կենտրոնական արխիւներում պահպանուող փաստաթղթերի մասին:

Եթէ դասդասելու լինենք արդէն գիտական շրջանառութեան մէջ դրուած Նժդեհին առնչուող փաստաթղթերը՝ ըստ դրանց ծագման յատկանիշների, ապա դրանք կարելի է բաժանել չորս հիմնական խմբի:

Նժդեհի հեղինակած փաստաթղթեր՝ նամակներ, գրութիւններ, հրամաններ, զեկուցագրեր, խոհեր, մտքեր, աշխատասիրութիւններ եւն.,

Նժդեհին հասցէագրուած փաստաթղթեր՝ նամակներ, գրութիւններ, դիմումներ, զեկուցներ եւն.,

Նժդեհի երկու՝ կուսակցական (ՀՅԴ կողմից, Թաւրիզ, 1921) ու խորհրդային (1944-48) դատավարութիւններին առնչուող փաստաթղթեր՝ ձերբակալման, խորհրդական վերաբերեալ ակտեր, զեկուցագրեր, նաև բացատրագրեր, դիմումներ, հարցաքննութեան արձանագրութիւններ եւն.,

Նժդեհի մասին բազմազան ու տարաբնոյթ փաստաթղթեր:

Նժդեհի զրչի ու մտքի անմիջական արգասիքը հանդիսացող ըուն նժդեհեան փաստաթղթերը շատ չեն: Բայց, դրանք չեն արժէքաւորւում սուկ քանակական չափանիշով, այլ ամէնից առաջ, անկախ՝ փաստաթղթերի ծաւալից, որպակական յատկանիշներով՝ խորքով, ընդգրկմամբ, Նժդեհին բնորոշ տարերքով՝ ու տարողականութեամբ: Այս փաստաթղթերից իւրաքանչիւրը առանձին վերցուած, եւ բոլորը միասին, երեւան են հանում արդէն իսկ կենդանութեան օրօք ժողովրդի մի մասի կողմից առասպելացած, ԺԹ. դարի վերջի եւ ի. դարի սկզբի հայոց ազատամարտի մեծ դիւցազնի որքան ոգեղէն, նոյնքան եւ հողեղէն, անզուգական կերպարը, քանզի, ըստ իս հանրաւոր չէ Նժդեհի կողքին զնել մէկ ուրիշին, որն իր մէջ ներդաշնակօրէն զուգակցէր անձնուրաց հայրենասիրութիւնը՝ մեծ ու ազմավարի, կազմակերպչի, ազգային գաղափարախօսի ու մոգի, խօսքի, գրչի, մտքի ճկունութեան, վարպետութեան ու խորութեան աստուածատուր չնորհների հետ: Ասուածի վկայութիւնը կարող են հանդիսանալ Նժդեհի գլխաւորած Զանգեզուրեան Ազատամարտը (1919ի երկրորդ կէս-Թուլիս 1921), նրա պատմահայրենասիրական, գաղափարափիլիսոփայական ստեղծագործութիւններն ու խոհերը, աֆորիզմային հնչեղութիւն եւ արժէք ունեցող նրա մտքերը: Բերենք դրանցից մի քանիսը, որոնք՝ խորունկ ու խօսուն լինելով հանդերձ, պարզ են, մատչելի եւ այնքան վարակիչ.-

«Քաջերին, միայն քաջերին է լսում ու գօրավիգում պատերազմների քնահած աստուածը»<sup>8</sup>:

«Նա է միշտ յաղքող, որն արդէն յաղթել է իրեն»<sup>9</sup>:

«Ես տեսայ հոգուով ազատը ստրկութեան մէջ, եւ սիրեցի մարդը: Ես տեսայ ստրուկն ազատութեան մէջ, եւ գարշեցի մարդէն»<sup>10</sup>:

«Պայքարի պատրաստուող ժողովուրդները նախ սպառազինուում են հոգեբաւու: Անտեսուած է այս պայմանը՝ անխուսափելի է պարտութիւնը»<sup>11</sup>:

«Մանկօրէն միամիտ են այն կուսակցութիւնները, որոնք ժխտելով բարոյականութիւնը քաղաքական պայքարի մէջ՝ կարծում են, թէ կարող կը լինեն բարոյական մաքրութիւն պահել իրենց շարքերում»<sup>12</sup>:

«Ժողովուրդները չեն պարտում, եթէ չեն ուզում պարտուել»<sup>13</sup>:

«Հայրենիքներն ապրում են հայրենասիրութեամբ, կործանուում՝ դրա պակասաց»<sup>14</sup>:

«Փոքր ազգերը պարտաւոր են աւելի հայրենասէր լինել, քան մեծերը: Սենք՝ աւելի, քան բոլորը»<sup>15</sup>:

«Ռազմավարի հանճարը բխում է նրա հոգու վեհութիւնից»<sup>16</sup>:

«Ծակատագրական է առաջնորդի գերը ժողովոյի կեանքում»<sup>17</sup>:

«Մայրերի ափի մէջ պիտի փնտոել ազգերի ճակատագիրը»<sup>18</sup>:

**Մաքուր է Նժդեհը, անկեղծ ու անկաշատ:** Հոգով, արեան ամէն քնիցով շաղկապուած է Հայրենի Հողին ու ժողովրդին: Չունի ուրիշ տենչանք, քան ազատ, անկախ ու երջանիկ տեսնելու իր Հայրենիքը Այդ նպատակի համար նա պատրաստ է զոհարերել իրեն ամբողջութեամբ եւ իր հաւատամբը այլ կերպ չի արտայայտում, քան՝ «իմ անձը աւելի իմ զերագոյն ծնողին՝ իմ ցեղին է պատկանում, քան իմ անմիջական ծնողներին»<sup>19</sup> նախադասութեամբ:

**Նժդեհը պատրաստ է զոհարերել անգամ իր ընտանիքը:** 25 Դեկտեմբերի 1952ին, ՀԽՍՀի պետական անվտանգութեան նախարարին Հասցեագրած նամակում, գառնութեամբ զոհելով անվտանգութեան մարմենների կողմից իր նկատմամբ ցուցաբերուող անմարդկային վերաբերմունքի մասին, Նժդեհը նշում է. «աւելորդ չեն համարում աւելացնել, որ ձեր մարմինների վերաբերմունքը անձամբ իմ եւ իմ ընտանիքի ճակատագրի նկատմամբ մազաշափ անգամ չի բուլացրել իմ բուն ծգոտումը զոհաբերել ամէն ինչ, անգամ իմ ընտանիքի գոյութիւնը, իմ ժողովրդի երջանկութեան համար»<sup>20</sup>:

Ինքնըստինքեան հասկանալի է, որ մի յօդուածով անհնարին է բացայայտել «Գարեգին Նժդեհը Արխիւային Փաստաթղթերում» խորագրով թեմայի բոլոր հիմնական հանգույցները: Բաւարարուենք նորայայտ մէկ-երկու փաստաթղթով եւ նրանց մասնակի վերլուծման միջոցով

փորձենք ցոյց տալ, թէ Վաչէ Յովսէփիեանի, Վլադիմիր Ղազախեցեանի եւ Աւագ Յարութիւնեանի այս յօդուածի ծանօթագրութիւններուանշուած աշխատութիւններում առաջին անգամ շրջանառութեան մէջ դրուած, ինչպէս նաեւ մեր կողմից ի յայտ բերուած փաստաթղթերը որքա՞ն կարեւոր են Նժդեհի կերպարն ու կատարած գործը արժէքաւուրելու տեսանկիւնից:

Խորհրդային զօրքերի կողմից ձերրակալուելուց առաջ, Սեպտեմբեր 1944ին, Սոֆիայում, եօթ թերթի վրայ գրած ինքնակենսագրականում, Նժդեհը նշում էր. «Հայատքի եւ պաշտամունքին տաճարում միշտ էլ առաջին տեղերը յատկացուած են եղել Աստուծոյ եւ Հայրենիքին: Հայատանն է եղել երկրաւոր սրբազնագոյնն ինձ համար: Ընչել, ապրել եմ նրանով՝ միշտ պատրաստ տառապիլու, զոհաբերելու եւ մեռնելու նրա համար: Դա է եղել իմ սրբազն ցաւը, կարօտը, ուրախութիւնը, իմ գոյութեան իմաստը, իմ անմահութիւնը, իմ զերագոյն իրաւունքը ու պարտականութիւնը...: Ունեցել եմ հարուստ լինելու եւ ճոխ ապրելու ամեն կարելիութիւնն, սակայն ապրել եմ իրեն ժողովրդի մարդ, համեստօրէն, աղքատ կոչւելու աստիճան, նիրապաշտութիւնը յեղափոխականի, օրականի, հայրենասէրի համար համարել եմ մէկը մեր աշխարհի ամենամեծ պղծութիւններէն»<sup>21</sup>:

10 Յուլիսի 1921ին Հայատանը հարկադրաբար թողած Նժդեհը՝ դառնալով, - նոյն ինքնակենսագրականի բառերով արտայայտած, - «հայրենակարուտ տարագիր», միայն մի բաղժանք է ունեցել՝ «մեռնել հայրենի լուսների վրայ»<sup>22</sup>:

Նժդեհեան փաստաթղթերը, սակայն, հայ ազատագրական պայքարի այդ հսկային չէ, որ միայն ներկայացնուած են: Դրանք ինչ-որ տեղ եւ ինչ-որ չափով լոյս են սփռում նաեւ այն իրադարձութիւնների, դէպքերի ու դէմքերի վրայ, որոնց առանցքում յայտնուել էր Նժդեհը իր կեանքի տարրեր փուլերում: Լսու որում, երբեմն այդ լոյսը իսկական անակնկալներ է մատուցում՝ միանգամայն անսպասելի կողմից երեւակելով ցարդ պատմական առումով մեզ կարծես թէ ի սպառ, կամ գրեթէ ի սպառ, մարսուած թեմաները եւ գործիչներին: Ծնուռում են հարցականներ, որոնց պատասխանը ոչ միայն չի տուել մեր պատմագիտութիւնը, այլեւ որոնց գոյութեան մասին չէր էլ ենթադրուում: Օրինակ, այդպիսիք առաջանուած են ՀՀ ԱԱՆԱում պահպանուող եւ Նժդեհի Գործում ներառուած անտիպ որոշ փաստաթղթերի ծանօթանալուց յետոյ: Խօսքը վերաբերում է ամէնից առաջ ՀԽՍՀ Պետական Անվտանգութեան Նախարարութեան (ՊԱՆ) ներքին բանտում Նժդեհի ոռուսերէնով գրած

«Դաշնակցութեան Առաջացման Պատմական Պայմանները եւ Նրա Բնութագիրը» եւ «Դաշնակցութիւնը Բուլղարիայում» աշխատութիւններին<sup>23</sup>, ինչպէս նաև Յունուար 1836ին Սոֆիայում գրած եւ յաջորդ տարի նոյն քաղաքում հրատարակուած իմ Պատմախանը՝ Հայաստանի Ռյաբրդութեանը Թրքօ-Բոյլերի Փաստաթղթերի Հոյսի Տակ աշխատութեան ձեռագիր օրինակի սկզբնամասի թղթերի հակառակ երեսներին արուած գրառումներին<sup>24</sup>: Արանցում Նժդեհը՝ անյոդդողդ համոզմունքի վրայ հիմնուած, իր հւրովի կարծիքն է յայտնել հայ ազատագրական պայքարի նշանաւոր գործիչներ Ռուրէն Տէր-Մինասեանի եւ Դրաստամատ Կանայիանի (Դրօ) մասին, որն այնքան էլ չի համերաշխում պատմագիտական գրականութիւնում ձեւաւորուած նրանց կերպարներին:

Սոյն յօդուածում խորամուխ լինել Նժդեհ-Դրօ, Նժդեհ-Ռուրէն եւ Դրօ-Ռուրէն եռակողմ յարաբերութիւնների բարդոյլթներին անկարելի է: Դա ինքնուրոյն ուսումնասիրութեան նիւթ կարող է ծառայել պատմարանների համար: Բայց որ այդ յարաբերութիւնները լարուած էին եւ դրանց արմատները թաղուած էին անցեալ դարի առաջին երկու տասնամեակների ռազմա-քաղաքական խորիստաներում, ակնյայտ է դառնում Նժդեհի մի շարք անդրադարձներից: Այսպէս, զուգահեռներ անցկացնելով Դաշնակցութեան առաջին սերնդի եւ իրեն ժամանակակից գործիչների միջեւ նա գրում է. «ինչ համենմատութիւն կարող է լինել Նիկոլ Դումանի եւ աւազակ Դրոյի, ինքննար Սերորի ու նորթապաշտ Տէր-Մինասեանի (Ռուրէն Փաշա) միջեւ»<sup>25</sup>:

1943ի սկզբներին Սոֆիայում գաղափարակից ընկերներից մէկի՝ Հայկ Ասատրեանի հետ Նժդեհը Դրոյի դէմ գրել էր մեղադրական ակտնամակ, որը հասցէագրուել էր Բուլխարեստ՝ մէկ այլ գաղափարակից՝ Սարգիս Արարատեանին: Խնդրելով նամակի բովանդակութիւնն հաղորդել Դրոյին, Նժդեհը Արարատեանին գրում էր. «Սեր նամակում մենք Դրոյին անուանել ենք «Ժողովրդապահն» եւ սպանում ենք, որ նա պատերազմից յետոյ մեր կողմից յանձնուելու է հասարակական դատի: Իր ձեռքի տակ ունենալով նամակը Դրօն սկսեց մեզ ահարեկել, սպանուալով, որ եթե ես շիշտուեմ իր հետ, ապա ինքը մեր նամակը կը յանձնի գերմանացիներին»<sup>26</sup>:

Նամակում Դրօն ներկայացուած է ծայրայեղ բացասական բնութագրմամբ. «Դրոյին՝ Հայաստանում աւազակային մասութիզմի հեղինակին եւ առաջին շանտաժիստին, ես լաւ եմ ճանաչում: Մարդ, որը

անձնական հարստացման ծարակից, ողջ կեանքում չարաշահում էր ժողովրդական գրկանքները, ընդունակ էր ամէն ինչի: ճանաչելով Կանայեանին, իմանալով, որ նրան դժուար չէ հասնել իմ ֆիզիկական ոչնչացմանը եւ, եւ իմ մարդիկ չեն դադարել դատապարտելուց նրա սեւ գործելով»<sup>27</sup>:

Նոյն գնահատականին է արժանանում Դրօն Նժդեհի երկարատեւ հարցաքննութիւնների ընթացքում: Ըստ Նժդեհի, Դրոյին նոյն կերպ են բնութագրել նաեւ Տէր-Մինասեանը, Դաշնակցութեան յայտնի այլ գէմքեր՝ Համօ ՕՀանջանեանն ու Վահան Նաւասարդեանը. «Բժիշկ Օհանջանեանի եւ Նաւասարդեանի աշքերում Դրօն՝ դա «գեադայի» կերպար է, որն ընդունակ է ամէն կարգի յանցագործութեան: Տէր-Մինասեանը ինձ հասցեագրած նամակներից մէկում Դրոյին անուանարկում է «հայ ժողովրդի դաւաճան»<sup>28</sup>:

Ինչ վերաբերում է Նժդեհ-Ռուրէն յարաբերութիւններին, ապա Նժդեհը բոլոր առիթներով նշում էր, որ իր Դաշնակցութիւնից հեռանալու հիմնական պատճառը եղել է Ռուրէնի հետ անձնական վատ յարաբերութիւնները: Բուլղարիայում ձերբակալուելուց յետոյ, առաջին իսկ հարցաքննութեան ժամանակ՝ 12 Հոկտեմբերի 1944ին, իրեն ուղղուած հարցին թէ «ի՞նչ դիրք էիր Դուք գրաւում Դաշնակցութիւն կուսակցութիւնում եւ որո՞նք են կուսակցութիւնից Ձեր հեռանալու պատճառները», Նժդեհը պատասխանում է. «Կուսակցութիւնում ես գրաւում էի աչքի ընկնող դիրք... կուսակցութիւնից ես դուրս եկայ «Դաշնակցութեան» բիւրոյի ղեկավար Ռուրէն Տէր-Մինասեանի հետ ունեցած անձնական անբարեացակամութեան հետեւանքով, 1937 բուականին»<sup>29</sup>:

Նժդեհը ինքն էլ, իր հարցաքննութեան արձանագրութիւնը պարունակող գործում, որը ամենածաւարլոնն է նրան վերաբերող առ այսօր յայտնի բոլոր փաստաթղթերից, ներկայանում է միանգամայն այլ գոյներով ու երանգներով: Հարցաքննութեան ժամանակ նրա տուած պատասխանները տարակուսանք են առաջացնում ուսումնասիրողների մօտ՝ Նժդեհին յատուկ համարձակութեան, անկեղծութեան հետ միաժամանակ՝ իրենց ինչ-որ տեղ մանկամիտ թուացող, առանց դոյզն իսկ դիւանագիտութեան, անթաքոյց, սպառիչ բնոյթով: Այսպէս, 12 Հոկտեմբերի 1944ի հարցաքննութեան ժամանակ, պատասխանելով իրեն տրուած հարցին՝ գերմանացիների հետ ունեցած յարաբերութիւնների վերաբերեալ, Նժդեհը մանրամասն պատմում է իր իսկ առաջարկութեամբ Բեռլինում հայերի ուսուցման նպատակով յատուկ դպրոց ստեղծելու, այնտեղ սովորելու համար իր յանձնարարութեամբ Բուլ-

դարիայում 30 հայ երիտասարդներ հաւաքագրելու եւ թեռլին ուղարկելու մասին եւ նշում նրանցից հինգի ազգանուններն ու բնակութեան վայրը, որոնց նա անձամբ ճանաչել եւ լիշել էր<sup>30</sup>:

Այս պարագայում կարելի է ենթաղրել, որ Նժդեհը յուսով էր, որ իր Սովիալց չհեռանալը եւ գործնականում կամովին խորհրդային մարմիններին յանձնուեն ու խորհրդային իշխանութիւնների համար շահեկան իր առաջարկութիւն-ծրագիրը՝ Թուրքալցի դէմ սպասուելիք ուազմական գործողութիւններում իր եւ իր իւրայինների ոյժերը օգտագործելու վերաբերեալ, պարտաւորեցնում էր իրեն մինչեւ վերջ անկեղծինել հարցաքննութեան ժամանակ:

Բայց Նժդեհը այդպիսին մնում է մինչեւ վերջ՝ նոյնիսկ երբ խորհրդային հարցաքննիչներն հրապուրուած չէին երեւում վերոնշեալ իր առաջարկութիւն-ծրագրով: 30 Ապրիլի 1947ի հարցաքննութեան ժամանակ, Նժդեհը վերջիններիս անմնացորդ հաղորդում է իրեն յայտնի ողջ տեղեկութիւնը իր յեղափոխական ընկերներից մէկի՝ Դաշնակցութեան անուանի գործիչներից, գրող Յովհաննէս Տեւենեանի մասին, որին խորհրդային գորքերի նոյն հակածետախուզական մարմինները դրանից քիչ առաջ՝ 19 Ապրիլի 1947ին ձերքակալել էին Ռումինիայում եւ որն այնուհետեւ յայտնուում է Նժդեհի հետ ՀԽՍՀ ՊԱՆի ներքին բանտի նոյն բանտախցում: Նժդեհը հարցաքննիչներին մանրամասնօրէն պատմում է Տեւենեանի ծաւալած քաղաքական գործունէութեան, դաւանած գաղափարների, բնակութեան վայրի եւն-ի վերաբերեալ<sup>31</sup>:

Նոյն անմիջականութեամբ եւ անկեղծութեամբ նա պատասխանում է նաեւ անձամբ իրեն եւ իր ընտանիքին, հարցապատներին վերաբերուող հարցերին: 10-11 Դեկտեմբերի 1947ի հարցաքննութեան ժամանակ, երբ նրան հարցնում են ԽՍՀՄում ապրող իր հարազատների մասին, նա յայտնում է իր իմացածը դստեր՝ Լիլիա Մելիք-Դադայեանի, եղրօք՝ Լեւոն Տէր-Յարութիւնեանի, վերջինիս երկու որդիների, ինչպէս նաեւ իր քոյրերի՝ Անիկ Մովսիսեանի եւ Անոֆիա Տէր-Մովսիսեանի մասին<sup>32</sup>:

Այսպէս վարուելու բացատրութիւնը Նժդեհը կարծես թէ տալիս է Վլադիմիր քաղաքի բանտից 26 Փետրուարի 1954ին՝ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի նախագահութեան նախագահ Կլիմենտ Վորոշիլովին հասցէագրած իր վերջին դիմումներից մէկում: «Արտայայտելով այն միտքը, որ յեղափոխականը, որը հետաքննութեան կամ դատավարութեան ժամանակ թաքցնում է իր գործունէութեան վերաբերեալ անգամ մի

փաստ, կարող է արատաւորել իր անունն ու իր անցեալը, ես սկսեցի պատասխանել հարցերիմ»<sup>33</sup>:

Նման վսեմ եւ ազնուագոյն սկզբունքներով առաջնորդուող Նժդեհը, սակայն, չէր կարող չխմանալ, որ հակառակ կողմը նոյն սկզբունքներով չէ, որ առաջնորդուում էր, եւ որ իր պատասխաններում հնչած ամէն անզգոյշ ասուած խօսք ու խոստովանութիւն, կարող էին ծանր հետեւանքներ ունենալ ոչ միայն իր, այլև այլոց համար:

Հարցականները, որոնք առաջանուած են վերը նշուած առնչութիւններով, երեւի թէ խնդիրներ են, որոնց ճիշտ լուծումը գտնելու համար, պէտք է, որ մանրամասն ուսումնասիրուեն ինչպէս նժդեհեան նշուած, այնպէս էլ յարակից այլ փաստաթղթեր: Ասուածը զալիս է մի աւելորդ անգամ՝ հաստատելու այն ճշմարտութիւնը, որ պատմութիւնը երկգոյն չէ՝ սեւ ու սպիտակ, այլ բազմագոյն ու բազմերանգ:

Փաստաթղթերի միւս խումբը, որը թոյլ է տալիս Նժդեհին դիտարկել նրա շրջապատի, իրենց կեանքն ու ճակատագիրը նրան վստահած մարդկանց, մարտիկների, ժողովրդի աչքերով, Նժդեհին ուղղուած փաստաթղթերն են, մանաւանդ 1920-21ի Զանգեզուրեան Դիւցազնամարտի ընթացքում նրան ուղղուած նամակները:

Հայրենի հողին ու ժողովրդին նուիրուած զօրավարին նոյնպիսի սիրով ու նուիրուածութեամբ էին կապուած նրա առաջնորդութեամբ ազատամարտի բոցերի մէջ նետուած Զանգեզուրի մի բուռ ժողովուրդն ու նրա ծոցից զուրս եկած մահապարտի ճակատագրով իրենց կնքած մարտիկները:

Այդպիսի նամակներից մէկի հեղինակը պոդպորուչիկ<sup>34</sup> Թաղէոս-եանցն է՝ Ցղնայից, գրուած՝ Նոյեմբեր 1920ին<sup>35</sup>: Նա գրում է իր եւ սպանուած ընկերոջ անունից: Նամակը եզակի է մի քանի առումով: Նախ, որ ուղղուած է Նժդեհին եւ արտայայտում է նրա նկատմամբ ունեցած մարտիկների պաշտամունքի վերածուած սէրը. «Սեզ երկուսի համար, գրում է նամակի հեղինակը, - կար երկու Աստուած, Մեծն Աստուած, որին հաւատում եւ պաշտում են բոլոր մարդիկ եւ փոքր Աստուած, մեր Աստուածը՝ հրամանատար Նժդեհը, մեր պաշտելի Նժդեհը»<sup>36</sup>:

Նժդեհի նկատմամբ պաշտամունքը պարտադրանքի, վախի, երկիւղի արգասիք չէր, ինչ կերպ սովորաբար արհեստականօրէն ստեղծւում է տարրեր առաջնորդների պաշտամունքը: Այն ինքնարուին ձեւաւորուած զգացմունք էր, որպէս բնական անդրադարձ Նժդեհի կեանքի ու գործի,

ինչպէս նաեւ հայրենի երկրին, հողին, ջրին, ժողովրդին նրա նույրուածութեան:

Թադէսուեանցի նամակը արժէքաւոր է նաեւ նրանով, որ վկայում է թէ Հայոց Հողի ազատագրութեան համար Հայերի հետ կողք-կողքի մահու կենաց պայքարի էին բարձրացել նաեւ Հայաստանը իրենց Հայրենիքը դարձրած այլ ժողովրդի ներկայացուցիչները Թադէսուեանցի սպանուած ընկերը՝ Քոչուեւ ազգութեամբ ասորի էր, այն էլ «Հեռաւուոր Դուինից», որտեղ թողել էր «սոված կնոջը եւ երեխաներին» Նամակը նաեւ մաքուր, ջինջ եւ հաւատարիմ մարտական ընկերութեան մասին է՝ «Երկու տատրակների, երկու կարապների նման սիրով միտեն ապրող ընկերների», մինչեւ, որ անողոք մահը, նամակագրի խօսքերով ասած, «Մեծն Աստուածը յաւիտեան բաժանեց»: Եւ վերջապէս, նոյն այդ փաստաթուղթը Հնարաւորութիւն է ընձեռում ժամանակների 80ամեայ հեռուից գդայականօրէն ընկալի այն, բառերով շրնորոշուող, դժմդակ պայմանները, որում վիճակուած էր խիզախել յանուն Հայրենի Հողի պաշտպանութեան ոտքի ելած այդ Հողի զաւակներին՝ «լուռ, անտրտունջ,...սոված,...տկլոր, զանազան բարոյական եւ ֆիզիկական նեղութիւններ, զրկանքներ տանելով», բայց՝ Հաւատարիմ միմեանց, ժողովրդին ու Հրամանատարին: Դիմելով Նժդեհին, նամակագիրը գրում է, որ Մեծ Աստուածը տարաւ իր ընկերոջ կեանքը, իսկ փոքր Աստուած Նժդեհը օգնութիւն կը հասցնի պահնուած ասորի ընկերոջ ընտանիքին, «կը կատարի պահնօնները. Վուժի պահնջը, այն ժամանակ նրա ուկորները հանգիստ կերպով կը փթին Գողբանում: Իմ խիդճն ել կը հանգստանայ»:

### Նամակը ստորագրուած է.

«Ձեր հրամաններին պատրաստ մեռնելու՝

«Պողպօրուչիկ Թադէսուեանց:

«26/X 1920թ. Ցննա»<sup>37</sup>:

Այս մէն մի նամակի օրինակով կարելի է համոզուել, թէ որքան բան կարող է մեզ պատմել՝ ընդամէնր երկու էջանոց փաստաթուղթը:

Գորիսից 18 Դեկտեմբերի 1920ին Նժդեհին հասցէագրուած մէկ այլ նամակ կրում է Հետեւեալ խորագիրը. «Միւնեաց Սպարապետին՝ Բողոք. Գորիսի Եւ Շրջանի Հայ Կանանց Կողմից»: 700 կանանց կողմից ստորագրուած այս նամակը սկսում է այսպիսի խօսքերով. «Այսպէս անուանած խորհրդային իշխանութեան ալիքը նոյնակա հասաւ եւ մեզ՝ հայ կանանց: Այդ կառավարութեան անունը լսել էինք, բայց երանի կը լիներ իրեն չտեսնէինք, նրա դառը բաժակը մինչեւ վերջը չծծէինք, նրա

դաժան խաղերը մեր կաշու վրայ փորձելով»: Կանաքը ապա շարունակում էն. «Մենք շատ էինք լսել Տաճկահայաստանի սարսափների ու գոլումների մասին, բայց այսպիսի բարբարութիւններ, ինչպիսին կային Զանգեզուրում խորհրդային իշխանութեան ժամանակ, մենք երբեք չենք տեսել»: Հայ կանաքը խորին շնորհակալութիւն էին յայտնում Նժդեհին, «որ ՚ուր մեզ ազատեցիր անոնն արատաւորելոց, աղջում ենք Ձեզ՝ եղէ այսուհետեւ էլ մեր պաշտպանն ու փրկիչը, որպեսզի երկրորդ անգամ նրանք շյանդենն ոտք կոխելու մեր երկիրը»<sup>39</sup>:

Զանգեզուրի տարրեր գիւղերից (Տեղ, Կոռնիձոր, Յղնա) Նժդեհին Հասցէազորուած նման համախօսականներ են պահպանում ՀՀ ՆՊԱռում<sup>40</sup>:

Նոյնիսկ Նժդեհի եւ նրա զլիսաւորած ժողովրդական պաքարի հակառակորդները, ինչպէս, օրինակ, Նժդեհի հետ բանակցելու համար Զանգեզուր այցելած Խորհրդապէին Հայաստանի էինք հոգուց բաղկացած պատուիրակութեան կոմունիստ ղեկավար Գրիգոր Վարդանեանը, վկայում է թէ Զանգեզուրի ժողովուրդն իրօք ատերութեամբ էր լցուած կարճ ժամանակով այստեղ հաստատուած խորհրդային կարգերի նկատմամբ: Ժողովրդին նետել էին թուրք ասկեարների ձեռքը, որոնք հանդէս էին գալիս Կարմիր Ռուսաստանի դաշնակիցների կերպարանքով: Նախապէս ստանալով Նժդեհի համաձայնութիւնը եւ իրենց անվտանգութեան երաշխիքներ, Վարդանեանի զլիսաւորած պատուիրակութիւնը Զանգեզուր էր մտել Ղարաբաղից, 1 Փետրուարի 1921ին: Խորհրդային Հայաստանի իշխանութիւններին ներկայացուած «Զանգեզուրի Ներկայ Կացութեան եւ Նժդեհի հետ Վարած Բանակցութեան Մասին» վերնագրուած զեկուցագրում Վարդանեանը գրում էր. «Տեղ գիտլ մտնելիս, ճանապարհին տեսանք հաւաքած բաւական բով գիւղացիք, որոնք շատ էլ հաշտ ու հանգիստ չեն դիտում մեզ: Մասսայի տրամադրութիւնը խիստ բացասական էր բում դէպի մեզ՝ իրեւ խորհրդային իշխանութեան ներկայացուցիչների:

«Գորիս մտնելիս մենք աւելի ու աւելի մոայլ ու վրէժխնդիր դէմքերի պատահեցինք, այստեղ մբնոլորտը աւելի ճնշող էր, մեր դէմ եղած ատերութիւնը զգալի էր աւելի շատ զինտրականութեան եւ պաշտօնեաների մէջ»<sup>40</sup>:

Հակառակորդ ճամբարում ստեղծուած այսպիսի փաստաթղթերը, սակայն, որոնք այս կամ այն չափով ճշմարտացի արտացոլէին իրավե-

ճակը, բացառութիւններ էին: Բազում էին կեղծիք, զրպարտանք ու յերիւրանք պարունակողները: Օրինակ, ՀՀ ՆՊԱռմ պահպանուած նման փաստաթղթերից մէկում՝ Բաքուում տեղակայուած 11րդ Կարմիր Բանակի ղեկավարութեանն ու ՀԽՍՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատին 1 Յունուարի 1921ին ներկայացուած լրտեսական հեռագիր-տեղեկատուութիւնում, որում տուեալներ էին հաղորդւում նժդեհի, գիւղերում տեղակայուած զինուժի, զէնքի տեսակների ու քանակի մասին, այս կերպ էր բնութագրուում նժդեհի եւ ժողովրդի յարաբերութիւնը: «Տեղի ժողովրդի վերաբերմունքը նժդեհի աւանտիրայի նկատմամբ խիստ բացասական է: Բազարչայում զինուորներն ասում են բոլշևիկների յարծակման դեպքում ոչ մի դիմադրութիւն ցոյց չենք տայ»<sup>41</sup>:

Որ դա ակնյայտ կեղծիք էր, վկայում են ինչպէս վերը բերուած փաստաթղթերը, այնպէս էլ այն փայտուն յաղթանակները, որ նժդեհի գլխաւորած ժողովրդական վաշտերը 1919-20ի առաջին հէսի ընթացքում տարան բազմակի անգամ մեծաքանակ եւ ուժեղ հակառակորդների՝ թուրք-աղբյութանական եւ Խորհրդային Ռուսաստանի զօրքերի նկատմամբ:

Որ ժողովուրդը հաւատում, վստահում, սիրում ու գնում էր նժդեհի ետելից, վկայում են նաև այլ փաստեր ու փաստաթղթեր: Բերենք եւս մի խօսուն ձեռագիր փաստաթուղթ:-

«Ղափանի ժողովրդական ոպազմական ոյժերի ներկայացուցիչները արտակարգ ժողովում որոշեցին նուիրել իրենց սիրած հերոսնեկավար Գարեգին Նժդեհին (ընդգծում փաստաթղթին է - U.U.), որը յաղթական դրօշակ բարձրացրեց Գիւղածորի, Բաղաբերդի բարձունքները եւ ջարդեց թշնամուն արեւելքում, մի «պատի սուր» հետևեալ մակագրութեամք»:

«Գարեգին Նժդեհին, որին Ղափանը անանեց «Երկրորդ Դափթթէկ», իսկ թշնամին «Աժմահա փաշա»:

«Ծոյու այդ սուրը միշտ յիշեցնէ հերոսին, որ Նժդեհը եւ Ղափանը անբաժան են ողով:

«2-ին փետրվարի 1920թ»:

Փաստաթղթի տակ դրուած է տասնմէկ հոգու ստորագրութիւն<sup>42</sup>:

Բոլշեվիկեան դասակարգային եւ միջազգայնական քարոզների ազդեցութեան տակ գտնուող մէկ ուրիշն էլ նժդեհեան փաստաթղթերից մէկի՝ «Հայաստանի Հանրապետութեան Մինիստրական Խորհրդին եւ Հ. Յանակցութեան Բիւրոյին» լրած բնագիր նամակի երկրորդ թեր-

թի ազատ մասում ձեռագրով անստորագիր լրտանք է թողել. «Ձեռագիրը, ոճը, պոռոտախօսութիւնը, ցինիկարար հայոյանքը, ժուլիկ<sup>43</sup> ստախօսութիւնը, ճարպիկ աւանտուրիստական եւ ցնորամիտ պերճախօս բառերով ... «սպարապետ», «Դաւիթ Բէդ», «Աժդահա Փաշա», «Զօրավար», «Սիւնեաց Իշխան», «Հայկական կառավարութեան հրամանատար», «Սուրբ Կարապետ» ստախօս խարերայ դոն քիչոտ Նժդեհն է գրել»<sup>44</sup>:

Ամփոփելով ասենք, որ Նժդեհին առնչող փաստաթղթերի մի քանի մասունքների միջոցով մենք փորձեցինք երեւան հանել այն տեսանկիւնները, որոնք ներկայացնող փաստաթղթերի լիարժէք եւ ըստ ամենայնի օգտագործմամբ ու համակողմանի քննական վերլուծութեամբ հնարաւոր կը դառնայ տալ Նժդեհի ամրողական եւ ճշմարտացի կերպարը:

Բայց, խնդիրն այն է, որ Նժդեհի անձին, կեանքին ու գործին վերաբերող եւ առնչուող ոչ քիչ փաստաթղթեր դեռևս հասու չեն ուսումնասիրողներին: Որ այդպիսիք կան եւ պէտք է լինեն, վկայում են մի շարք տուեալներ.

Նժդեհի վկայութեամբ, 10 Հոկտեմբերի 1944ին, Սովիայում նրա ձերբակալուելուց յետոյ, իրենից առզրաւուել եւ այլեւս չեն վերադարձուել ձեռագիր եօթ տետրակներ: Վերջին անգամ այդ մասին նա նշում է 25 Դեկտեմբերի 1952ին՝ ՀԽՍՀ պետական անվտանգութեան նախարարին ուղղուած իր նամակում<sup>45</sup>:

Նժդեհին ձերբակալելուց յետոյ նրանից առզրաւուած իրերի վերաբերեալ 10 օր անց կազմուած ակտում՝ 23 կէտի տակ նշուած է՝ «Տարբեր գրագրութիւն 12 թերթի վրայ»<sup>46</sup>:

Մարտ 1945ին (փաստաթղթում օրը նշուած չէ) Երրորդ Ռւկրաինական Ռազմաճակատի «Ամերշ» Հակահետախուզական Գլխաւոր Վարչութեան Քննչական Բաժնի հայագիր թարգմանիչ Ս. Եղեանի կողմից կազմուած «Նժդեհ. Խուզակութեան եւ Ձերբակալման ժամանակ Առգրաւուած Փաստաթղթերի Ցուցակ»ում ներքորերեալ կէտերի տակ նշուած են.

«12. Ազգայնական բովանդակութեամբ զանազան ձեռագլեր - 33 տեսոր:

«13. Գրական գրառումներ պարունակող առանձին ձեռագիր թերթեր - 1 թրթապանակ: /.../

«16. Զանազան գրառումներ պարունակող թրթապաններ - 5 հատ:

/.../

«21. Լուսանկարների ալբոմ - 1 հատ:

«22. Լուսանկարներ զանազան - 219 հատ»<sup>47</sup>:

**ՀՀ ԱԱՆ Նախակին բարձրաստիճան աշխատակիցները վկայում են, որ Նժդեհի համար 30 բանտախուզը զաղտնալուում էր եւ զաղտնալում նիւթերը եւ այլ փաստաթղթեր առանձնացուել էին դատաքննչական նիւթերից՝ մի առանձին գործում: Այդ գործը կազմուած է եղել Յ Հատուրից (մօտ 1500 էջ) եւ պահպանուել է խիստ գաղտնի: Առ այսօր այդ բացառիկ փաստաթղթերի ճակատագիրը մնում է անյայտ<sup>48</sup>:**

**ՀՀ պետական արխիւններում ուսումնասիրութիւններ կատարելու ընթացքում,** երբեմն-երբեմն, ոչ սակաւ պատահարար, յայտնաբերուում են Նժդեհին առնչուող փաստաթղթեր: Այդպիսիք, ինչպէս արդէն նըշուեց, ի յայտ են բերուել նաեւ մեր կողմից: Կը նշանակի, որ պետական արխիւնների ամենատարրեր Փոնդերում կարող են յայտնաբերուել դեռեւս ոչ քիչ «մոլորուած» նժդեհեան փաստաթղթեր:

Միանշանակ կարելի է պնդել, որ Նժդեհը զգալի փաստաթղթային հետքեր պէտք է որ թողած լինի իր ապրած, իր ժողովրդին սպառնացող վտանգից փրկելու նպատակով աշխատանքային այցելութիւններ եւ քաղաքական գործունէութիւն ծաւալած, բանտի եւ աքսորի տարիներն ու ամիսներն անցկացրած երկրներում ու վայրերում: Խօսքը չի գնում, անշուշտ, միայն Բուլղարիայի, ԱՄՆի եւ Ռուսաստանի մասին, ուր նա ապրել կամ պարտադրուած է եղել մնալ տարիներ շարունակ, այլ նաեւ Գերմանիայի, որտեղ, իր իսկ վկայութեամբ, նա մնացել էր վեց ամիս, Ռումինիայի, ԽՍՀՄի կազմում եղած այլ հանրապետութիւնների եւ տարածաշրջանների, օրինակ՝ Ուգրեկստանի, մասին:

Ասուածից հետեւում է, որ ամէնից առաջ անհրաժեշտ է ծրագրաւորուած, նպատակառութուած եւ համակարգուած աշխատանք տանել վերը նշուած բոլոր ուղղութիւններով՝ ի յայտ բերելու համար Նժդեհին առնչուող, ըստ կարելուոյն բոլոր, առ այսօր դեռեւս անյայտ փաստաթղթերը: Դա հնարապետութիւն կը տայ լուծելու երկու կարեւորագոյն խնդիր.

1. Նախապատրաստելու եւ առանձին գրքերով հրատարակելու Նժդեհի ողջ ժառանգութիւնը, որն իր մէջ կ'ամփոփի. ա) Նժդեհի ստեղծագործութիւնները, այդ թւում եւ գեղարուեստական (քանաստեղծութիւններ, նովէլներ եւն.), թ) Նժդեհի ստորագրութիւնը կրող փաստաթղթերը, եւ զ) Նժդեհին առնչուող փաստաթղթերը:

2. Նժդեհի ժառանգութիւնը ամփոփող փաստաթղթերի ժողովածուի հիմքով իրականացնել Նժդեհի կեանքն ու գործունէութիւնը համակողմանի լուսաբանող հիմնարար ուսումնասիրութիւն:

Երբեմն լուսում են կարծիքներ առ այն, որ արդէն յայտնի փաստաթղթերն ու նիւթերը լիուվի բաւարար են Նժդեհի կերպարը լուսաբանելու համար: Որ զա այդպէս չէ՝ մենք հպանցիկ անդրադարձանք վերեւում, մասնաւորապէս նշելով այն հարցականների մասին, որոնք առաջանում են Նժդեհեան որոշ փաստաթղթերին ծանօթանալուց յատոյ: Եւ, ապա, մեր իսկ կատարած պրատումները ՀՀ ԱԱՆ Գերատեսչական Արխիվում պահպանուղ Նժդեհի գործում ամփոփուած փաստաթղթերում թոյլ տուեցին նոր տուեաներ ի յայտ բերելու եւ էապէս հարստացնելու Նժդեհի մտաւոր կարողութիւնների մասին մեր պատկերացումները Այսպէս, 10 Հոկտեմբերի 1944ին Նժդեհի ճերակալման եւ խուզարկութեան առնչուղ փաստաթղթերի ուսումնասիրութիւնը մեզ բերում է այն եզրակացութեանը, որ Նժդեհը բացի հայերէնից եւ բուլղարերէնից, որոնց նա տիրապետում էր կատարեալ<sup>49</sup>, ինչպէս նաեւ ոռուերէնից, որին նա տիրապետում էր ազատ (գրաւոր ոռուերէնում նա կարող էր թոյլ տալ աննշան սիսաներ), Նժդեհն առնուազն կարդում եւ խօսում էր գերմաններէն, ոռումիններէն, թուրքերէն, գուցէն նաեւ՝ անզերէն: Նման եզրակացութիւն անելու համար մեզ հիմք է առուել խուզարկութեան ժամանակ Նժդեհից առգրաւուած անձնական իրերի վերը նշուած ցուցակը, որի կէտ Ցի տակ նշուած է: «Գրքեր՝ գերմաններէն, ոռումիններէն եւ բուլղարերէն լեզուներով - 15 հատ»<sup>50</sup>: Թուարկուած լեզուների հերթագայութիւնն, հաւանաբար, պատահական չէ, եւ պէտք է եզրակացնել, որ 15 գրքերից ամենամեծ բաժինը ընկնում է գերմաններէնին, ապա՝ ոռումիններէնին, մնացեալ՝ բուլղարերէնին: Նոյն ցուցակում առանձին նշուած է առգրաւուած բուլղարերէն եւս վեց գրքի մասին<sup>51</sup>: Կարծում ենք, որ Նժդեհը հենց այնպէս չէր կարող պահել գրքեր, որոնք չէր կարող կարդալ ու օգտագործել:

Մէկ այլ փաստ: Նժդեհի նոյն գործում, ինչպէս վերը նշեցինք, պահպանուել է իր իմ Պատասխանը. Հայաստանի Ռյաբրգութիւնը թրքօթողշեմիկ Փաստաթղթերի Հոյսի Տակ աշխատութեան ձեռագիր օրինակի մի մասը Փաստաթղթերի հիմքով եւ իսկական պատմաբաններին ներյատուկ ձիրքով գրուած այս գործում, Նժդեհը օգտագործել է թուրք մի պատմաբանի՝ 1938ին Ստամբուլում թուրքերէնով հրատարակած մի աշխատութիւն, մէջբերում արել նրանից՝ տողատակում նշելով հեղինակին:

Աւարտելով ասենք, որ Նժդեհը արժանի է մեր մնայուն ուշադրութեանը՝ նա զրան արժանացել է իր ապրած կեանքով, իր կատարած գործով, Հայրենիքին իր անմնացորդ շաղկապուածութեամբ։ 1937ին Սովհայում գրած երկու էջանոց մի ձեռագիր գործում, Հայրենիքին եւ Հայ ճակատագրին նույիրուած իր մտորումները նա աւարտել է այսպիսի սոողերով։

«Ահա եւ իմ վերջին խօսքը.

«Կ'ուզէի աշջերս փակել մի ահեղ ճակատամարտում, յաղրութեան թեւերի վրայ, զօրքերիս գոռ աղաղակների մէջ։ Սակայն, ուր էլ եւ ինչպէս էլ մեռնեմ, թող Սիւնեաց իմ նախակին ոսպմիկները Խուստուալ լեռան սրտի մէջ ամփոփեն իմ մի քու ածինը։

«Ուր էլ եւ երբ էլ մեռնիմ, հաւատա՛, իմ ազիզ ժողովուրդ, որ արտաքին վտանգներից ժամանակ իմ անհանգիստ ոգին այցի եւ օգնութեան պիտի փուրայ իր Հայրենի աշխարհին եւ աներեւութաբար քո բանակներն առաջնորդէ։

«Զինուոր զաւակ՝

«Նժդեհ»<sup>52</sup>:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Սմերչ՝ ոռուսերէն երկու բառերից կազմուած յապաւում, որը Հայրէնով նշանակուամ է՝ «Ճակ լրտեսներին»։
- 2 Քիրի Իմ Օրագրէն, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1924; Արդիների Պայքարը Հայրերի Նէմ, Սելանիկ, «Գողթան», 1927; Բաց Նամակներ Հայ Մտաւորականութեան, Պէյրութ, տպ. «Ճակագրան», 1929; Ծեղի Ոգու Շարժու Սովիա, տպ. Պ. Պալլունեան, 1932; Ամերիկայացութիւնը Ծնոր Եւ Իր Տականքը Սովիա, «Մասիս», 1936; Իմ Պատասխանը. Հայրատանի Ողբերգութիւնը Թրթրոյնեւիկ Փաստաղթերի Լոյսի Տակ, Սովիա, տպ. Պ. Պալլունեան, 1937։
- 3 Վարդան Գէորգեան, Հեռնահայաստանի Հերոսամարտը, Պուքրէշ, 1923; Աւո, Նժդեհ, Պէյրութ, 1968; Արմէն Սեւան, Բանտարկեանի Մը Յուշերը. Տառապանքի Տարիներ Գ. Նժդեհի Հետ, Պուենոս Ալէս, 1970 եւն։
- 4 Նժդեհը քիչ Հակառակորդներ չունէր նոյնիսկ ՀՅԴ ղեկավարութեան մէջ, որին նա պատկանում էր առ 1937 թուականը Այդ մասին, գեռեւս 16 Օգոստոսի 1921ին՝ Նժդեհի թաւրիզի կուսակցական դատավարութեան ժամանակ, նշում էր Սիմոն Վրացեանը. «Իմ կարծիքով միսալում են եւ Նժդեհի հակառակորդներն եւ ինըն Նժդեհն։ Նրանք ուզում են գնահատել այնպիսի երեւյթներ, որոնք միայն պատմութիւնը կարող է գնահատել երէ պատասխանատութեան հարց կայ՝ բոլորինքնան եւ պատասխանատու ենք, որովհետեւ ամենը էլ այս կամ այն ծնուզ դեր ենք կատարել այդ գործի մէջ», տե՛ս՝ ՀՅԴ Կենտրոնական Արխիվ, Բոստոն, Դատական Գործ, էջ 85;

Աւագ Ցարութիւնեան, Գարեգին Նժդեհի 1921 թ. Թաւրիզի Դատավարութիւնը, Երեւան, 2001, էջ 110. Նժդեհի Հակառակորդների թւում յատապայում յարտնուեցին նաև իր կուսակիցներից Դրաստամատ Կանայքանը (Դրօն) եւ Ռուբէն Տէր-Մինասեան Այս մասին կը խօսի մեր այր յօդուածում:

ՀՅԴից դուրս, ԱՄՆի Բանուորական Կուսակցութեան Հայկական Հատուածի օրդան Բանելոր պարբերականը՝ 3 Ցունուարի 1934ի Համարում՝ «Դուրեանի Սպաննութիւնը Եւ Նժդեհի Ցեղակոնութիւնը» յօդուածում, Նժդեհին որակում էր «աւազակներու (դաշնակցականների - Ս.Ա.) քրմապես (ընդգծումը թերթին է - Ս.Ա.) եւ ապա գորում. «Դաշնակցութիւնը ... նոր կրօն մը լոցած է «ցեղակոնութիւն» անամբ, որ շատեր այլ ես սկսած եմ շատ թնականորէն «ցեղակոնութիւն» կոչել: Նժդեհի այս նոր կրօնի հիմնադիրն ու հեղինակն է».

Իր Հակառակորդների, իրեն հետապնդողների մասին ինքնակենսագրութիւնում գորում էր նաև Նժդեհը. «Եկատ սպիտական բանակը եւ տեղի ունեցաւ այն, ինչ-որ սպասառ էր: Օգտուելով ստեղծուած թուրքիից իրենց ցեղի կարով շնծացած մի քանի վատարեած հայեր արդէն զորի են անցել: Նրանք ... իրեն ոստիկանական լուսներ՝ հետեւները զինուած միլիցիօններներ առած, ընկած են տնելուուն, ինձ են փնտրում... Նմ...ապահոն քարոզութեան համար հայութեան հատուածականացած, ապահայրենացած ու պարտուղական տարրելոց դասադրեցին իմձ»: Այսուհետերձ, Նժդեհը մեծահոգարար ներում էր բոլորին. «Ներում եմ բոլորին, ներում կրկնակ պատճառներով -առաջինը իմ ազգային դասանանը թոյ չի տալիս թշնամնը տածել դէպի որեւէ հայ մարդ: Երկրորդ՝ խորապէս հասկանում եմ այլ դժբախտներին, որոնք դեռ չեն յարդահարած ստրուկն իրենց մէջ, որով եւ մնացել են տկար ու չար», տե՛ս՝ ԱԱՆԱ, Նժդեհի Գործ, Հատոր 4, ծրար 1, «Ինքնակենսագրութիւն», թթ. 5ը եւ 6:

5 Վարագ Առաքելեան, Նժդեհ, Երեւան, 1989; Արցան Բունիաթիւն, Նժդեհի Վերագար- մը, Երեւան, 1999; Արամ Միմոնեան, Զանգեզուրի Փոյսամարտը 1920-1921թթ., Երեւան, 2000; Վաղիմիր Ղազախեցեան, Նժդեհը Զանգեզուրում, 1920 թ. Վերթ-1921 թ. Յուլիս, Երեւան, «Զանգակ-97», 2001; Աւագ Ցարութիւնեան, Գարեգին Նժդեհի 1921 թ. Թաւ- րիզի Դատավարութիւնը, Vache Ovsepian, Garegin Nzhde I KGB: Vospominaniiia Razvedchika (Գարեգին Նժդեհը Եւ Պետական Անվտանգութեան Կոմիտէն. Հետախոյքի Ծիչողութիւններ), Երեւան, 2001; Արտակ Վարդանեան, Նժդեհեան Մասունքներութեան, Երեւան, «Զանգակ-97», 2001; Գարեգին Նժդեհ, 115. Գիտաժողովների Նիւթեր; Խափայէլ Համբարձումեան, Վարք Նժդեհի. Առողթենք, Երեւան, «Զան- գակ-97», 2001: Նժդեհի մասին Հրատակուել են նաև Սեր Խանզադեանի Գարեգին Նժդեհ (Երեւան, «Արեւիկ», 1993) կենսագրավէպն ու Խաչիկ Զիլինգարեանի Ապարա- գետ Նժդեհ. Ազգային Ազատազրական Պայքար (Երեւան, «Գլուխիւն» ՀԲՄ Հրատա- րակչութիւն, 1998) մանրանկար դրուագներով դրքոյլը:

6 Հաւատամը, 1991; Բանտային Գրառումներ (Խորհրդածութիւններ), 1993; Ցեղակրօն Ուժուն, 1998; իմ հմ Օրագրէն. Բաց Խամակներ Հայ Մատարականութեան. Որդինե- րի Պայքարը Հայութի Դէմ, 1998; Հատութիր, «Հայստան» Հրատարակչութիւն, 2001, եւն.:

7 Տե՛ս, օրինակ՝ Սերհակ Ամիրեան, «Նժդեհը Փաստաթղթերում», Հայստանի Հանրա- պետութիւն, 17 Մայսի 1991, նաև՝ նախակայութեան մէջ ակզբաղբիւրները:

- 8 Գարեգին Նժդեհ, «Եսթը Պատուիրաններ իմ Զինակիցներին», ՀՀ ՊԱ, Փոնդ 490, ցուցակ 1, գործ 13, թերթ 1.
- 9 Նոյն:
- 10 ԱԱՆԱ, Նժդեհի Գործ, Հատոր 4, ծրար 1: *Մէջբերւում է առաջին անգամ:*
- 11 Գարեգին Նժդեհ, «Բաց Նամակներ Հայ Մտաւորականութեան», տե՛ս՝ Հաւատամբ, էջ 50-51:
- 12 Նոյն, էջ 57:
- 13 Նոյն, էջ 60:
- 14 Գարեգին Նժդեհ, «Էջեր Իմ Օրագրէն», տե՛ս՝ Հաւատամբ, էջ 71:
- 15 Նոյն, էջ 72:
- 16 Նոյն, էջ 74:
- 17 Նոյն, էջ 80:
- 18 Գարեգին Նժդեհ, «Որդիների Պայքարը Հայրերի Դէմ», տե՛ս՝ Հաւատամբ, էջ 105 (գլուխ 11ի՝ «Առիւծածին Մայրերի բնարանը»):
- 19 ԱԱՆԱ, Նժդեհի Գործ, Հատոր 4, ծրար 1: *Հրապարակւում է առաջին անգամ:*
- 20 Ovsepian, էջ 46:
- 21 Նժդեհի «Ինքնակենսազրութիւն»ը, ի թիւս այլ նիւթերի, առզրաւուել էր նրանից՝ թուղարիալում ձերբակալուելուց յատոյ եւ ի վերջոյ հանգրուանել ԱԱՆԱ, Նժդեհի Գործում, Հատոր 4, ծրար 1:
- 22 Նոյն:
- 23 Սոյն աշխատութիւնների բնագրերը պահպանւում են ԱԱՆԱի Նժդեհի Գործում, Հատոր 4, ծրար 2: Նժդեհի ծննդեան 11մամեակին նույիրուած գիտաժողովում մեր կարդացած զեկուցումից յատոյ (որ այս յօդուածի հմաքն է կազմում) դրանց բնագրերը հրապարակուել են Վաչէ Յովսէփիսինի նշուած աշխատութիւնում, էջ 194-211, իսկ դրանց հայերէն թարգմանութիւնը՝ Գարեգին Նժդեհ, Ծրիճը, հ. 2, Երեւան, 2002, էջ 447-466. Աշխատութիւնները ուղարէնով լինելու հանգամանքը յուշում է, որ դրանք կարող են գրուած լինել խորհրդադին անվտանգութեան մարմինների պահանջով:
- 24 Նժդեհի իմ Պատամիանը՝ Հայաստանի Ողորդութիւնը Թրքօ-Բողեևիկ Փաստաթղթեակի թերթի լուսի ֆակ աշխատութեան ձեռագրի պահպանւուած 15 էջի հակառակ երեսները՝ ծալըից ծալը լցուած են բանտում արուած սեւագիր գրառումներով, որոնք, սակայն, հապճեպ են շարադրուած, ջնջումներով, եւ այդ իսկ պատճառով մասամբ անընթեռնելի են, տե՛ս՝ ԱԱՆԱ, Նժդեհի Գործ, Հատոր 4, ծրար 1:

- 25 ԱԱՆԱ, Նժղեհի գործ, Հատոր 4, ծրար 2; Ovsepian, էջ 195.
- 26 Այս մասին Նժղեհը յիշատակում է 15 Օգոստոսի 1948ին Հեֆորտով բանտից (Մոսկ-ուա) «Մմերշի» Գլխաւոր Վարչութեան պետ Գեներալ-Գնդապետ Վ. Արակումովին հասցէազրած ռուսերէն նամակում, տե՛ս՝ ԱԱՆԱ, Նժղեհի Գործ, Հատոր 4, ծրար 1. Հրապարակում է առաջին անգամ:
- 27 Նոյն:
- 28 Նոյն, ծրար 2; Ovsepian, էջ 199.
- 29 Նոյն, Հատոր 1, թ. 22թ; Ovsepian, էջ 100.
- 30 Նոյն, թ. 25թ; Ovsepian, էջ 113-114.
- 31 Նոյն, Հատոր 2, էջ 63-64; Ovsepian, էջ 19-21.
- 32 Նոյն. էջ 70; Ovsepian, էջ 89-90.
- 33 Նոյն, Հատոր 4, ծրար 2; Ovsepian, էջ 149.
- 34 Պողպորոչիկը սպայական կոչում էր ռուսական բանակում, որ պահպանուել էր նա-եւ 1918-20ի Հայաստանի Հանրապետութեան զինուած ոյժերում. Հայերէն հոմանիշ չունի, անգլերէնող՝ second lieutenant:
- 35 ՀՀ ՊԱ, Փ. 499, ց. 1, գ. 17, թթ. 1-2: Այդ փաստաթուղթը մենք առաջին անգամ հրա-պարակել ենք Հայաստանի Հանրապետութիւն օրաթերթում, 17 Մայիսի 2001.
- 36 Նոյն. թ. 1:
- 37 Նոյն, թ. 2:
- 38 ՀՀ ՆՊԱ, Փ. 114, ց. 2, գ. 70, թ. 21:
- 39 Նոյն թթ. 25, 26, 41: Առ այսօր չեն հրապարակուել:
- 40 Նոյն, թ. 16: Հրապարակում է առաջին անգամ:
- 41 Նոյն, Փ. 113, ց. 3, գ. 7, թ. 25: Հրապարակում է առաջին անգամ:
- 42 ՀՀ ՊԱ, Փ. 499, ց. 1, գ. 2, թ. 1:
- 43 Ժուլիկ - ռուսերէն՝ խարդախ, խարերայ:
- 44 ՀՀ ՊԱ, Փ. 499, ց. 1, գ. 25, թ. 2:
- 45 ԱԱՆԱ, Նժղեհի Գործ, Հատոր 4, ծրար 2; Ovsepian, էջ 44:
- 46 Նոյն, Հատոր 1, թ. 10:
- 47 Նոյն, թ. 17:

48 Ovsepian, էջ 3:

49 Բուլղարիայում Նժդեհը երկար տարիներ, իոր ձեւակերպմամբ՝ «մշտապէս զրադուել է ժուռանալիստիկայով», աշխատակցել է Սովիայում, բուլղարեղէնով լրյա տեսնող Ազնոտովաց գրական թերթին, ինչպէս նաև ԱՄՆում լրյա տեսնող Հայկական թերթին, տե՛ս՝ ԱԱՆԱ, Նժդեհի Գործ, Հատոր 1, թ. 22; Ovsepian, էջ 109.

50 ԱԱՆԱ, Նժդեհի Գործ, Հատոր 1, թ. 15:

51 Նոյն. Հատոր 4, ծրար 1:

52 Նոյն. Հրապարակում է առաջին անգամ:

### GAREGIN NJDEH IN ARCHIVAL DOCUMENTS (Summary)

SERHAK AMIRIAN

The name of Garegin Njdeh (Ter-Harutiunian, 1886-1955) was never pronounced in positive light during the seven decades of Soviet rule in Armenia. This devoted member of the Dashnak party was described as an 'enemy of the people' for his anti-Soviet activities. Much has changed since, points out Serhak Amirian in this article; several monographs have been published on Njdeh's life in the newly independent Republic of Armenia since 1991. The author believes, however, that there is still a lot to do in this regard in light of the newly accessible archival documents in Armenia.

Basing his argument on the current availability of recently discovered documents pertaining to Njdeh, Amirian thinks it has become necessary to write his fresh and comprehensive political biography.